Արձանագրություն N 2

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար էլեկտրատեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների (օդորակիչների) ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/12-06-7» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «13» հուլիսի 2016թ. Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արման Ղուկասյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ)

հանձնաժողովի անդամներ՝

Կարեն Համբարձումյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ)

Աղավնի Բուդուլյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ)

Էլլադա Արզաքանյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ)

Սարգիս Արմենակյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ)

հանձնաժողովի քարտուղար՝

Արամ Համբարյան՝ (Գնման պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/Մհմ)

- **Տեղեկատվություն՝ «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/12-06-7» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերի բացման մասին.**

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի /այսուհետ՝ Համակարգ/ միջոցով 2016թ.-ի հուլիսի 13-ին, ժամը 10:00-ին:

Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը (անունը)	**Հասցեն, հեռախոսահամարը**
Ա/Ձ Գրիգոր Այվազյանն	Արարատի մարզ, գ. Ոստան, Թեհլերյան 14 էլ. հասցեն՝ xachagir@mail.ru Հեռ. (055) 595010
«ԱԼՖԱՊՐՈՋԵՔՏ» ՍՊԸ	ք. Երևան, Վ. Վաղարշյան 26շ. բն. 21 Հեռ. (098) 050505, (093) 071688

Համակարգում 01.07.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած բոլոր հնարավոր մասնակիցները հայտեր չեն ներկայացրել:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

➢ **Տեղեկատվություն՝ գնման առարկայի ընդհանուր գնի վերաբերյալ.**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնումների գործընթացը կազմակերպվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգով, այդ իսկ պատճառով՝ հրապարակվում է պատասխանատու ստորաբաժանման կողմից իրականացված շուկայի ուսումնասիրման արդյունքում ձևավորված առավելագույն կողմնորոշիչ գինը:

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 44-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման առարկայի մասով իրականացված շուկայի ուսումնասիրման արձյունքում ձևավորված առավելագույն կողմնորոշիչ գինը:

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գինը /ՀՀ դրամ/
1.	**Օդորակիչ, 9000 BTU**	1 600 000 /մեկ միլիոն վեց հարյուր հազար/

➢ **Մասնակիցների կողմից առաջարկած գներն են**

ՀՀ դրամ

Հ/Հ	Մասնակիցների անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գումարը
1	«ԱԼՖԱՊՐՈՋԵՔՏ» ՍՊԸ	1 060 000	157 500	1 217 500	243 500	1 461 000/ մեկ միլիոն չորս հարյուր վաթսունմեկ հազար/
2	Ա/Ձ Գրիգոր Այվազյանն	1 640 000	160 000	1 800 000	-	1 800 000 /մեկ միլիոն ութ հարյուր հազար/

➢ **Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ի, «ԱԼՖԱՊՐՈՋԵՔՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

➢ **Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

1. «ԱԼՖԱՊՐՈՋԵՔՏ» ՍՊԸ -ի ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

2. Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում <<Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու դիմումում>> (Հավելված 1) նշված է, որ հայտով առաջարկվող չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքը (ապրանքները) հանդիսանում Թայլանդ, ԱՄԷ, ԱՄՆ, ՉԺՀ, ԵՄ արտադրության ապրանք, մինչդեռ՝ պետք է հստակ նշվի թե առաջարկվող ապրանքը որ երկրի արտադրանք է:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

➢ **Գնահատող հնաձնաժողովը որոշեց ներկայացված հայտերի շտկման նպատակով հանձնաժողովի նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով:**

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը հրավիրել 2016թ. հուլիսի 15-ին, ժամը՝ 11:00-ին:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝

Ա. Ղուկասյան ----------

(ստորագրություն)

Հանձնաժողովի անդամներ՝

Կ. Համբարձումյան ----------

(ստորագրություն)

Ա. Բուդուլյան ----------

(ստորագրություն)

Է. Արզաքանյան ----------

(ստորագրություն)

Ս. Արմենակյան ----------

(ստորագրություն)

Գնումները համակարգող՝

Ա. Համբարյան ----------

(ստորագրություն)

Արձանագրություն N 3

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար էլեկտրատեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների (օդորակիչների) ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/12-06-7» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «15» հուլիսի 2016թ. Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արման Ղուկասյանը,

հանձնաժողովի անդամներ՝

Կարեն Համբարձումյանը, Աղավնի Բուդուլյանը, Էլլադա Արզաքանյանը և Սարգիս Արմենակյանը

հանձնաժողովի քարտուղար՝

Արամ Համբարյանը

1. Տեղեկատվություն՝ ներկայացրած հայտերում արձանագրված անհամապատասխանությունները մասնակիցների կողմից շտկելու վերաբերյալ.

Ա/Ձ Գրիգոր Այվազյանը սահմանված ժամկետում շտկել է հայտերում արձանագրված անհամապատասխանությունը:

Ղեկավարվելով Կարգի 46-րդ կետով՝ հանձնաժողովը որոշեց՝ Ա/Ձ Գրիգոր Այվազյանի կողմից ներկայացրած հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱԼՖԱՊՐՈՋԵՔՏ» ՍՊԸ-ին:

1-ին չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել Ա/Ձ Գրիգոր Այվազյանին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

1. Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետով՝ նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել համապատասխան հարցումը,
2. Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2016թ. հուլիսի 21-ը ներառյալ ներկայացնել Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի <<զ>> պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետով հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը հրավիրել 2016թ. հուլիսի 25-ին, ժամը՝ 11:00-ին:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝

Ա. Ղուկասյան ----------

(ստորագրություն)

Հանձնաժողովի անդամներ՝

Կ. Համբարձումյան ----------
(ստորագրություն)

Ա. Բուդուլյան ----------
(ստորագրություն)

Է. Արզաքանյան ----------
(ստորագրություն)

Ս. Արմենակյան ----------
(ստորագրություն)

Գնումները համակարգող՝

Ա. Համբարյան ----------
(ստորագրություն)